ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունը,

ցանկանալով կնքել եկամուտների եւ կապիտալի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիա,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից եկամտից եւ կապիտալից գանձվող հարկերի նկատմամբ, անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից եւ կապիտալից հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարից, կապիտալի ընդհանուր արժեքից, կամ եկամտի կամ կապիտալի առանձին տարրերից, այդ թվում շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետեւյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես.

a) Հայաստանում՝

(i) շահութահարկ,

(ii)եկամտահարկ,

(iii) գույքահարկ,

(այսուհետ՝ "հայկական հարկ"),

b) Միացյալ Թագավորությունում՝

(i) եկամտահարկ,

(ii) կորպորատիվ հարկ,

(iii) կապիտալի արժեքի հավելաճից հարկ,

(այսուհետ՝ "Միացյալ Թագավորության հարկ"),

4. Սույն Կոնվենցիան կկիրառվի նաեւ ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կծանուցեն միմյանց իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխությունների մասին:

Հոդված 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում.

a) "Հայաստան" տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն եւ երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը եւ օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները եւ իրավասությունը՝ համաձայն ազգային օրենսդրությանը եւ միջազգային իրավունքի,

b) “Միացյալ Թագավորություն” տերմինը նշանակում է Մեծ Բրիտանիա եւ Հյուսիսային Իռլանդիա, ներառյալ Միացյալ Թագավորության տարածքային ծովից դուրս ցանկացած տարածք, որը Մայրցամաքային Շելֆի վերաբերյալ նրա օրենքներով եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան համարվում է տարածք, որտեղ կարող են իրականացվել Միացյալ Թագավորության իրավունքները՝ կապված ծովի հատակի եւ ընդերքի եւ դրանց բնական ռեսուրսների հետ,

c) “Պայմանավորվող պետություն” եւ ”մյուս Պայմանավորվող պետություն” տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Միացյալ Թագավորություն կամ Հայաստան,

d) “անձ” տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն եւ անձանց ցանկացած այլ միավորում,

e) “ընկերություն” տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

f) “ձեռնարկություն” տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

g) “Պայմանավորվող պետության ձեռնարկություն” եւ “մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն” տերմինները համապատասխանաբար նշանակում են Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

h) “միջազգային փոխադրում” տերմինը նշանակում է ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջեւ,

i) “իրավասու մարմին” տերմինը նշանակում է.

(i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարը եւ պետական եկամուտների կոմիտեի նախագահը կամ նրանց լիազորած ներկայացուցիչները,

(ii) Միացյալ Թագավորության դեպքում՝ Նորին գերազանցության եկամուտների եւ մաքսային հանձնաժողովի անդամները կամ նրանց լիազորած ներկայացուցիչը,

j) "ազգային անձ" տերմինը նշանակում է.

(i) Հայաստանի դեպքում՝ ցանկացած ֆիզիկական անձ, ով Հայաստանի քաղաքացի է եւ ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա, որը որպես այդպիսին իր կարգավիճակը ստացել է Հայաստանում գործող օրենքների հիման վրա,

(ii) Միացյալ Թագավորության դեպքում՝ ցանկացած բրիտանական քաղաքացի կամ ցանկացած այլ Համագործակցության կամ տարածքի քաղաքացիություն չունեցող ցանկացած հպատակ, եթե նա բնակության իրավունք ունի Միացյալ Թագավորությունում, ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն, ասոցիացիա կամ այլ միավորում, որը որպես այդպիսին իր կարգավիճակը ստացել է Միացյալ Թագավորությունում գործող օրենքների հիման վրա,

k) "ձեռնարկատիրական գործունեություն" տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների եւ անկախ բնույթի այլ գործունեությունների իրականացում,

l) "կենսաթոշակային ապահովման համակարգ" տերմինը նշանակում է Պայմանավորվող պետությունում ստեղծված ցանկացած համակարգ կամ այլ մեխանիզմ, որը.

(i) որպես կանոն այդ Պետությունում ազատվում է եկամտահարկով հարկումից, եւ

(ii) հիմնականում գործում է ղեկավարելու կամ նախատեսելու կենսաթոշակ կամ ծերության թոշակ կամ եկամուտ ստանալու այդպիսի մեկ կամ ավելի համակարգերի օգտին:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս, նրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, ընդ որում՝ այդ Պետությունում գործող հարկային օրենքներով

սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով՝ այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

Հոդված 4

ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով "Պայմանավորվող պետության ռեզիդենտ" տերմինը նշանակում է ցանկացած անձ, որն այդ Պետության օրենքների համաձայն այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, ռեզիդենտության, կառավարման վայրի, ստեղծման (գրանցման) վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա եւ ներառում է նաեւ այդ Պետությունը եւ նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանում կամ իշխանության տեղական մարմին: Սակայն, այդ տերմինը չի ներառում որեւէ անձ, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ կապիտալի արժեքի հավելաճի կամ այնտեղ գտնվող կապիտալի առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետեւյալ կերպ.

a) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, իսկ եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ իր անձնական եւ տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

b) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում չունի իր տրամադրության տակ մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

c) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից եւ ոչ մեկում, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է,

d) եթե նա երկու Պետությունների ազգային անձ է կամ դրանցից եւ ոչ մեկում այդպիսինը չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն որոշել, թե սույն Կոնվենցիայի նպատակների համար այդ անձը որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ պետք է համարվի: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում, անձը չի համարվում Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի ռեզիդենտ, Կոնվենցիայով նախատեսված ցանկացած արտոնություն պահանջելու նպատակով, բացառությամբ 23-րդ, 25-րդ եւ 26-րդ Հոդվածներով նախատեսված արտոնությունների:

Հոդված 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար "մշտական հաստատություն" տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. "Մշտական հաստատություն" տերմինը ներառում է մասնավորապես.

a) կառավարման վայր,

b) մասնաճյուղ,

c) գրասենյակ,

d) գործարան,

e) արհեստանոց, եւ

f) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման կամ տեղակայման ծրագիրը կազմում է մշտական հաստատություն, միայն եթե այն շարունակվում է ինը ամսից ավել ժամանակահատված:

4. Անկախ սույն Հոդվածի նախորդ դրույթներից, "մշտական հաստատություն" տերմինը չի ներառում.

a) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակի համար,

d) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

e) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

f) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես a)-ից e) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար, պայմանով, որ գործունեության կայուն վայրի պահման համընդհանուր գործունեությունը այդ համակցության արդյունքում շարունակում է կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Անկախ 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներից, եթե անկախ կարգավիճակով գործակալից տարբեր անձը, որի նկատմամբ կիրառվում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից եւ ունի եւ սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ, երբ այդպիսի անձի գործունեու-

թյունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը, եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության՝ այդ կետի դրույթների համաձայն:

6. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ այն ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, առեւտրային գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, եթե այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից որեւէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

Հոդված 6

ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. "Անշարժ գույք" տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Տերմինն, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում եւ անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) եւ օգտակար հանածոների հանքատեղերի,

հանքավայրերի եւ այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, օդանավերը եւ ավտոմոբիլային փոխադրամիջոցը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձեւով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ ձեռնարկության անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձեւով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող միանգամայն ինքնուրույն եւ առանձին ձեռնարկություն եւ գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել մշտական հաստատության նպատակների համար կատարված ծախսերը, այդ թվում՝ կառավարչական եւ ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից,

կատարվել են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլուր:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր ենթամասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա ոչինչ 2-րդ կետում չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը՝ որոշել հարկման ենթակա շահույթը այդպիսի բաշխման ընդունված եղանակով: Այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն Հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար միայն ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակների համար մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշվում է տարեցտարի միևնույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր եւ բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի կամ կապիտալի արժեքի հավելաճի այնպիսի տեսակներ, որոնք առանձին քննարկվում են սույն Կոնվենցիայի այլ Հոդվածներում, ապա սույն Հոդվածի դրույթները չեն ազդում այդ Հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն Հոդվածի նպատակների համար, միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ներառում է.

a) շահույթը՝ ստացված նավերի կամ օդանավերի առանց անձնակազմի վարձակալության տալուց, եւ

b) շահույթը՝ ստացված ապրանքների կամ արտադրանքի փոխադրումների համար օգտագործվող կոնտեյներների (ներառյալ տրեյլերները եւ կոնտեյներների փոխադրման համար ուղեկցվող սարքավորումները) օգտագործումից, պահումից կամ վարձակալության տալուց,

որտեղ այդպիսի վարձակալությունը, կամ այդպիսի օգտագործումը, պահումը կամ վարձակալությունը, իրավիճակից կախված, կարող է երկրորդական լինել միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործելու նկատմամբ:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաեւ միավորումում, համատեղ գործունեության մեջ կամ միջազգային գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ՝

a) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ, կամ

b) միեւնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության եւ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ,

եւ յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջեւ նրանց առեւտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջեւ, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձեւով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ եւ համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում եւ համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը

ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում եւ այդ ձեւով ներառված շահույթի բոլոր տարրերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջեւ փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջեւ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը համարում է ճշգրտումը արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, եւ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն.

a) այդպիսի շահաբաժինները ազատվում են հարկերից այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժինները վճարող ընկերությունը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը կենսաթոշակային ապահովման համակարգն է,

b) բացառությամբ a) ենթակետով նախատեսված դեպքի, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաեւ այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժինները վճարող ընկերությունը եւ այդ Պետության օրենսդրության համաձայն, սակայն այդ ձեւով գանձվող հարկը չպետք է գերազանցի՝

(i) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերություն է եւ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության բաժնետիրական կապիտալի առնվազն 25 տոկոսը եւ շահաբաժինները վճարելու պահին շահաբաժինները վճարող ընկերության բաժնետիրական կապիտալում առնվազն 1

մլն. ֆունտ ստերլինգի (կամ այլ տարադրամին համարժեք գումար) ներդրում է կատարել:

(ii) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը, երբ շահաբաժինները վճարվում են եկամտից (ներառյալ գույքի արժեքի հավելաճը)՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված անշարժ գույքից, 6-րդ Հոդվածի իմաստով, ներդրում կատարելու միջոցով, որն այս եկամտի մեծ մասը բաշխում է տարեկան, եւ որի եկամուտն այդպիսի անշարժ գույքից ազատված է հարկից,

(iii) շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. "Շահաբաժիններ" տերմինը սույն Հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաեւ ցանկացած այլ տարր, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից եկամուտը, այն Պետության օրենսդրության համաձայն, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով եւ մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ Հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված

վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, եւ չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

6. Սույն Հոդվածի համաձայն ոչ մի արտոնություն չի տրամադրվում, եթե այն որեւէ անձի հիմնական նպատակն է կամ հիմնական նպատակներից մեկը, որը կապված է բաժնետոմսերի կամ այլ իրավունքների առաջացման կամ բաշխման հետ, որոնց կապակցությամբ վճարվում են շահաբաժինները այդ առաջացման կամ բաշխման միջոցով սույն Հոդվածից օգտվելու համար:

Հոդված 11

ՏՈԿՈՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն, այդպիսի տոկոսները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենսդրությանը համապատասխան, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեւով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից, Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները կարող են հարկվել միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը այդ մյուս Պայմանավորվող պետության կառավարությունն է, նրա քաղաքական ստորաբաժանումը կամ իշխանության տեղական մարմինը, կամ այդ մյուս Պայմանավորվող պետության կենտրոնական բանկը կամ այդ կառավարությանն ամբողջությամբ պատկանող ցանկացած այլ հաստատություն:

4. "Տոկոսներ" տերմինը սույն Հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից եւ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից եւ,

մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից եւ եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն Հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում: Տերմինը չի ներառում որեւէ տարր, որը 10-րդ Հոդվածի դրույթների համաձայն դիտարկվում է որպես շահաբաժին:

5. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ Հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, եւ այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով, վճարվող տոկոսների գումարը որեւէ պատճառով գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

8. Սույն Հոդվածի համաձայն ոչ մի արտոնություն չի տրամադրվում, եթե այն որեւէ անձի հիմնական նպատակն է կամ հիմնական նպատակներից մեկը, որը կապված է

պարտապահանջի առաջացման կամ բաշխման հետ, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները՝ այդ առաջացման կամ բաշխման միջոցով սույն Հոդվածից օգտվելու համար:

Հոդված 12

ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաեւ այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենսդրությանը համապատասխան, բայց եթե ստացողը ռոյալթիների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձեւով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. "Ռոյալթիներ" տերմինը սույն Հոդվածում օգտագործելիս նշանակում է փոխհատուցման ձեւով ստացած ցանկացած տեսակի վճարումներ՝ գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների հեղինակային իրավունքի, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձեւի կամ գործընթացի կամ արդյունաբերական, առեւտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության (նոու-հաու) օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերումկիրառվում են 7-րդ Հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն, երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից,

Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը եւ այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով վճարվող ռոյալթիների գումարը որեւէ պատճառով գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

7. Սույն Հոդվածի համաձայն ոչ մի արտոնություն չի տրամադրվում, եթե այն որեւէ անձի հիմնական նպատակն է կամ հիմնական նպատակներից մեկը, որը կապված է իրավունքների առաջացման կամ բաշխման հետ, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները՝ այդ առաջացման կամ բաշխման միջոցով սույն Հոդվածից օգտվելու համար:

Հոդված 13

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ Հոդվածում սահմանված, անշարժ գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի (բացառությամբ այն բաժնետոմսերի, որոնցում կա Ֆոնդային բորսայի էական եւ կանոնավոր առեւտուր) կամ համադրելի մասնաբաժինների (որոնց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կան անուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից) օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի այդ Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի, կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է գույքը օտարողը:

Հոդված 14

ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ եւ 18-րդ Հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

a) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս

Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, եւ

b) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, եւ

c) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Անկախ սույն Հոդվածի նախորդ դրույթներից, միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ համանման մարմնի անդամ ստացած տնօրենների հոնորարները եւ այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 16

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Անկախ 7-րդ եւ 14-րդ Հոդվածների դրույթներից, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իր իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7-րդ եւ 14-րդ Հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

Հոդված 17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. 18-րդ Հոդվածի 2-րդ կետին համապատասխան Պայմանավորվող պետության ռեզիդենտ անձին վճարված կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից, միանվագ վճարումը, որը ստացվել է Պայմանավորվող պետությունում ստեղծված կենսաթոշակային ապահովման համակարգից եւ փաստացի տնօրինվում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից, ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 18

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. a) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

b) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում եւ այդ Պետության ռեզիդենտ ֆիզիկական անձը.

(i) այդ Պետության քաղաքացի է, կամ

(ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայությունները մատուցելու նպատակով:

2. a) Անկախ 1-ին կետի դրույթներից, Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից, կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները եւ

համանման այլ վարձատրությունները ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

b) Սակայն, այդպիսի կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ Հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, ռոճիկի, կենսաթոշակների եւ համանման այլ վարձատրությունների նկատմամբ:

Հոդված 19

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչեւ Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, եւ որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չի հարկման այդ Պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից, պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 20

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

1. Ֆիզիկական անձը, ով ժամանել է Պայամանավորվող պետություն այդ Պետությունում համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում դասավանդելու կամ հետազոտությունների նպատակով, եւ ով հանդիսանում կամ անմիջապես մինչեւ ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ազատվում է հարկումից առաջին հիշատակված Պայմանավորվող պետությունում այդպիսի դասավանդման կամ հետազոտությունների համար վարձատրության առումով՝ այդ նպատակով իր առաջին ժամանման օրվանից 2 տարին չգերազանցող ժամանակահատվածում,

պայմանով, որ այդպիսի վարձատրությունն առաջանում է այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. 1-ին կետի դրույթները չեն վերաբերում հետազոտությունից ստացվող վարձատրությանը, եթե այդպիսի հետազոտությունն իրականացվում է ոչ թե հասարակական, այլ հիմնականում հատուկ անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 21

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից փաստացի տնօրինվող եկամտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ Հոդվածներում չհիշատակված տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, բացի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից կամ մահացած անձանց գույքի կառավարման ընթացքում վճարված եկամուտներից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ Հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամտի փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով եւ իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ Հոդվածի դրույթները:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետում հիշատակված ռեզիդենտի եւ մեկ այլ անձի կամ նրանց երկուսի եւ որեւէ երրորդ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով, այդ կետում նշված եկամտի գումարը գերազանցում է այն գումարը (եթե այդպես է), որը կհամաձայնեցվեր նրանց միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում եկամտի ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի կիրառվող մյուս դրույթները:

4. Սույն Հոդվածի համաձայն ոչ մի արտոնություն չի տրամադրվում, եթե այն որեւէ անձի հիմնական նպատակն է կամ հիմնական նպատակներից մեկը, որը կապված է իրավունքների առաջացման կամ բաշխման հետ, որոնց կապակցությամբ վճարվում է եկամուտը՝ այդ առաջացման կամ բաշխման միջոցով սույն Հոդվածից օգտվելու համար:

Հոդված 22

ԿԱՊԻՏԱԼ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող եւ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ Հոդվածում նշված անշարժ գույքով ներկայացված կապիտալը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մյուս Պայմանավորվող պետության մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքով ներկայացված կապիտալը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով եւ օդանավերով ներկայացված կապիտալը եւ այդպիսի նավերի եւ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է այդպիսի կապիտալի սեփականատեր ձեռնարկությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կապիտալի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 23

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետեւյալ կերպ.

a) Երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում (ներառյալ կապիտալի արժեքի հավելաճը) կամ կապիտալ է տնօրինում, որը սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող է հարկվել Միացյալ Թագավորությունում, ապա Հայաստանը թույլ է տալիս.

(i) այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել Միացյալ Թագավորությունում վճարված հարկին հավասար գումար,

(ii) այդ ռեզիդենտի կապիտալի հարկից հանել Միացյալ Թագավորությունում վճարված կապիտալի հարկին հավասար գումար:

Սակայն այդպիսի հանումները երկու դեպքում էլ չպիտի գերազանցեն մինչեւ հանումի տրամադրումը հաշվարկված հարկի այն մասը, որը վերաբերվում է, հանգամանքներից կախված, եկամտին կամ կապիտալին, որը կարող էր հարկվել Միացյալ Թագավորությունում:

b) Երբ սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթին համապատասխան Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած կապիտալը ազատվում է Հայաստանում հարկումից, ապա Հայաստանը, համենայն դեպս, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ կապիտալի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս, հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ կապիտալը:

2. Միացյալ Թագավորության օրենսդրության դրույթներին համապատասխան Միացյալ Թագավորության տարածքից դուրս վճարման ենթակա Միացյալ Թագավորության հարկի դիմաց հարկի հաշվանցման առնչությամբ, կամ հանգամանքներից կախված, Միացյալ Թագավորության տարածքից դուրս առաջացած շահաբաժինների Միացյալ Թագավորության հարկից ազատման առնչությամբ (որը չի ազդում դրա ընդհանուր սկզբունքի վրա).

a) հայաստանյան աղբյուրներից ստացված շահույթից, եկամտից կամ վճարման ենթակա կապիտալի արժեքի հավելաճից ուղղակիորեն կամ նվազեցման միջոցով (բացառությամբ այն շահույթի առնչությամբ վճարման ենթակա շահաբաժինների հարկի դեպքի, որից վճարվում է շահաբաժինը) Հայաստանի օրենսդրությամբ եւ սույն Կոնվենցիային համապատասխան վճարման ենթակա հայկական հարկը ենթակա է հաշվանցման Միացյալ Թագավորության ցանկացած հարկի դիմաց՝ հաշվարկված շահույթի, եկամտի կամ վճարման ենթակա կապիտալի արժեքի հավելաճի այն նույն սկզբունքով, ինչ սկզբունքով հաշվարկվում է հայկական հարկը,

b) Հայաստանի ռեզիդենտ ընկերության կողմից Միացյալ Թագավորության ռեզիդենտ ընկերությանը վճարված շահաբաժինը ազատվում է Միացյալ

Թագավորության հարկից, երբ Միացյալ Թագավորության օրենսդրությամբ բավարարվում են ազատման համար նախատեսված պայմանները,

c) վերին b) ենթակետի համաձայն՝ հարկից չազատված շահաբաժնի դեպքում (քանի որ չեն բավարարվել Միացյալ Թագավորության օրենսդրությամբ ազատման համար նախատեսված պայմանները), որը վճարվել է Հայաստանի ռեզիդենտ ընկերության կողմից Միացյալ Թագավորության ռեզիդենտ ընկերությանը, եւ որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է շահաբաժինը վճարող ընկերությունում ձայնի իրավունքի առնվազն 10 տոկոսը, վերին a) ենթակետում նշված հաշվանցումը նույնպես հաշվի է առնում ընկերության՝ իր շահույթի առնչությամբ, որից վճարվում են շահաբաժինները, վճարման ենթակա հայկական հարկը:

3. 1-ին եւ 2-րդ կետերի նպատակների համար, Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող շահույթը, եկամուտը եւ կապիտալի արժեքի հավելաճը, որը սույն Կոնվենցիային համապատասխան կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, համարվում է առաջացած այդ մյուս Պետության աղբյուրներից:

Հոդված 24

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԹԱՓԱՆՑԻԿ ԱՆՁԻՆՔ

Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան ֆինանսապես թափանցիկ անձի միջոցով ստացված եկամտի, շահույթի կամ կապիտալի արժեքի հավելաճի տարրը համարվում է ստացված Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից այն չափով, որչափով այդ տարրը այդ Պայմանավորվող պետության հարկային օրենսդրության նպատակների համար դիտարկվում է որպես ռեզիդենտի եկամուտ, շահույթ կամ կապիտալի արժեքի հավելաճ:

Հոդված 25

ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չպետք է ենթարկվեն մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին միեւնույն հանգամանքների դեպքում, մասնավորապես

կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պետությունում, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 8-րդ, 12-րդ հոդվածի 6-րդ կամ 7-րդ կամ 21-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ կետերի դրույթները, տոկոսները, ռոյալթիները եւ Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են հանման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով պետք է ենթակա լինի հանման նույն պայմաններով, ինչպես եւ պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջովին կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակիորեն կամ անուղղակի վերահսկվում է այդ մյուս Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը հիշատակված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ նրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը հիշատակված Պետության այլ նման ձեռնարկությունները:

5. Սույն Հոդվածում պարունակվող ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորություն յուրաքանչյուր Պայմանավորվող պետության համար այդ Պետությունում մշտապես չբնակվող ֆիզիկական անձանց հարկման նպատակների համար տրամադրելու ցանկացած անձնական արտոնություններ, զեղչեր եւ նվազեցումներ, ինչպիսիք տրվում են մշտապես բնակվող անձանց կամ իր ազգային անձանց:

6. Սույն Հոդվածի դրույթները կիրառվում են սույն Կոնվենցիայի 2-րդ Հոդվածում նշված հարկերի նկատմամբ:

Հոդված 26

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Երբ անձը համարում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները բերում են կամ կբերեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին ոչ համապատասխանող հարկման, ապա նա կարող է այդ Պետությունների ներքին օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդ գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը կհամարի հիմնավորված եւ եթե չկարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառել սույն Կոնվենցիային ոչ համապատասխան հարկումը: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն պետք է կատարվի անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքում առկա, ցանկացած ժամանակային սահմանափակումների կամ այլ ընթացակարգային սահմանափակումների, բացառությամբ այնպիսի սահմանափակումների, որոնք կիրառվում են այն պահանջների նկատմամբ, որոնք իրականացվել են այսպիսի համաձայնությունը կատարելու համար:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն լուծել բոլոր դժվարություններն ու հակասությունները, որոնք կարող են առաջանալ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաեւ, Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում, համատեղ խորհրդակցել կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ըմբռնման մեջ համաձայնության հասնելու նպատակով:

5. Այն դեպքում, երբ.

a) անձը, 1-ին կետի դրույթներին համապատասխան, հարցը քննարկման է ներկայացրել Պայմանավորվող պետության իրավասու մարմնին այն հիմնավորմամբ, որ մի Պայմանավորվող պետության կամ նրանց երկուսի գործողությունները հանգեցրել են այդ անձի՝ սույն Կոնվենցիայի դրույթներին ոչ համապատասխան են հարկման, եւ

b) իրավասու մարմինները ի վիճակի չեն համաձայնության հասնել լուծելու այդ հարցը 2-րդ կետին համապատասխան՝ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին տվյալ հարցի ներկայացման օրվանից երկու տարվա ընթացքում,

այդ խնդրից բխող ցանկացած չլուծված հարց փոխանցվում է արբիտրաժ (միջնորդ դատարան), եթե անձն այդպես է պահանջում: Այս չլուծված խնդիրները, սակայն, չեն փոխանցվում արբիտրաժ, եթե այդ խնդիրների վերաբերյալ որոշում արդեն կայացվել է Պետություններից մեկի դատարանի կամ վարչական իրավասության մարմնի կողմից: Եթե այս խնդրի հետ անմիջական կապ ունեցող անձը չի ընդունում փոխադարձ համաձայնությունը, որը կիրառում է արբիտրաժի որոշումը, այդ որոշումը պարտադրվում է երկու Պայմանավորվող պետություններին եւ ենթակա է իրականացման՝ անկախ այդ Պետությունների ներքին օրենսդրություններում ցանկացած ժամանակային սահմանափակումների: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն կետի կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

6. 5-րդ կետի դրույթները չեն կիրառվում սույն Կոնվենցիայի 4-րդ Հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի նկատմամբ:

Հոդված 27

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման կամ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենքների կիրարկման համար նախատեսված տեղին տեղեկություններ են փոխանակում

Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի եւ նկարագրության հարկերի վերաբերյալ այն չափով, որ չափով հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային, մասնավորապես, կանխելու խարդախությունը եւ հեշտացնելու հարկերի վճարումից խուսափելը կանխելու դրույթների վարչարարությունը: Տեղեկությունների փոխանակումը 1-ին եւ 2-րդ Հոդվածներով չի սահմանափակվում:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի դրույթի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրությամբ ստացված տեղեկությունը, եւ տրամադրվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները եւ վարչական մարմինները), որոնք զբաղվում են 1-ին կետում նշված հարկերը գնահատելով կամ գանձելով, հարկադիր գանձումով կամ դատական հետապնդումով, բողոքարկումները քննելով կամ վերը նշվածի հսկողությամբ: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը դատական դռնբաց նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Անկախ վերը նշվածից, Պայմանավորվող պետության կողմից ստացված տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակների համար, եթե այդպիսի տեղեկությունը կարող է օգտագործված լինի այդպիսի այլ նպատակների համար երկու Պետությունների օրենսդրություններին համապատասխան եւ եթե տրամադրող Պետության իրավասու մարմինը թույլատրում է այդպիսի օգտագործումը:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

a) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին եւ վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ,

b) ներկայացնելու տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ վարչարարության բնականոն ընթացքում,

c) ներկայացնելու տեղեկություններ, որոնք բացահայտում են որեւէ առեւտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առեւտրային կամ մասնագիտական

գաղտնիք, կամ առեւտրական գործընթաց, կամ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը:

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն Հոդվածի դրույթների համաձայն, ապա մյուս Պայմանավորվող պետությունը օգտագործում է տեղեկություն հավաքելու իր միջոցները՝ ստանալու համար պահանջված տեղեկությունը, եթե նույնիսկ այդ մյուս Պետությունն իր սեփական հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկության անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը ենթարկվում է 3-րդ կետով սահմանված սահմանափակումներին, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես թույլտվություն Պայմանավորվող պետությանը՝ խուսափելու տեղեկություն տրամադրելուց բացառապես այն նպատակով, որ ինքը չունի այդպիսի տեղեկության նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես թույլատրող Պայմանավորվող պետությանը՝ խուսափելու տեղեկություն տրամադրելուց միայն այն պատճառով, որ տեղեկությունը տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատությունը, գործակալությունում աշխատող թեկնածուն կամ անձը կամ վստահված անձը կամ այն պատճառով, որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

Հոդված 28

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունները:

Հոդված 29

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում են միմյանց սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իրենց օրենքներով պահանջվող ընթացակարգերն ավարտելու մասին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցումներից վերջինը ստանալու օրվանից եւ նրա դրույթները գործում են.

a) Հայաստանում.

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների համար,

(ii) եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը սկսվող ցանկացած հարկային տարվա ընթացքում վճարման ենթակա հարկերի համար,

b) Միացյալ Թագավորությունում.

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների համար,

(ii) հաշվի առնելով վերը նշված (i) դրույթը, եկամտահարկի եւ գույքի արժեքի հավելաճից հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ապրիլի 6-րդ օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած հաշվետու տարվա համար,

(iii) կորպորատիվ հարկի առնչությամբ՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ապրիլի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած ֆինանսական տարվա համար:

Հոդված 30

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում մինչեւ Պայմանավորվող Պետություններից մեկի կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը այն ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ, դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ներկայացնելով: Այդ դեպքում Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը.

a) Հայաստանում.

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ այդ օրվանից հետո ստացված եկամուտների համար,

(ii) եկամտի կամ կապիտալի մյուս հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրվանից սկսվող ցանկացած հարկային տարվա ընթացքում վճարման ենթակա հարկերի համար,

b) Միացյալ Թագավորությունում

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ այդ օրվանից հետո ստացված եկամուտների համար,

(ii) հաշվի առնելով վերը նշված (i) դրույթը, եկամտահարկի եւ կապիտալի արժեքի հավելաճից հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու օրվան հաջորդող ապրիլի 6-րդ օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած հաշվետու տարվա համար,

(iii) կորպորատիվ հարկի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու օրվան հաջորդող ապրիլի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած ֆինանսական տարվա համար:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է ք. Երևան 13-ին, 2011թվականի հոկտեմբերի, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը անգլերեն եւ հայերեն լեզուներով, երկու տեքստերը հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Կառավարության միջեւ եկամուտների եւ կապիտալի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիայի ստորագրման պահին երկու կողմերը համաձայնության եկան հետեւյալ դրույթների վերաբերյալ, որոնք կազմում են Կոնվենցիայի անբաժանելի մասը.

1. 4-րդ հոդվածի (Ռեզիդենտ) առնչությամբ.

Համաձայնեցված է, որ "Պայմանավորվող պետության ռեզիդենտ" տերմինը ներառում է.

a) այդ Պետությունում ստեղծված կենսաթոշակային ապահովման համակարգը, եւ

b) կազմակերպություն, որը ստեղծվել եւ գործում է բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, մշակութային կամ կրթական նպատակով (կամ այդ նպատակներից մեկից ավելի համար) եւ որն այդ Պետության օրենքների համաձայն հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ, անկախ այն հանգամանքնից, որ իր ամբողջ եկամուտը կամ գույքի արժեքի հավելաճը կամ դրանց մի մասը կարող է ազատվել հարկումից այդ Պետության ներքին օրենսդրության համաձայն:

2. 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 2-րդ կետի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ Հայաստանի եւ Տնտեսական Համագործակցության եւ Զարգացման Կազմակերպության ներկայիս անդամ պետություններից որեւէ մեկի միջեւ (սույն Արձանագրության ստորագրման օրվա դրությամբ) ստորագրված որեւէ համաձայնագրով նախատեսվի, որ Հայաստանում առաջացող տոկոսները Հայաստանում ազատվում են հարկումից կամ Հայաստանում հարկվում են ավելի ցածր դրույքաչափով, քան սույն Կոնվենցիայում կիրառվող դրույքաչափն է, ապա այդպիսի ազատում կամ ավելի ցածր դրույքաչափ անմիջապես կկիրառվի սույն Կոնվենցիայի դրույթներով կարգավորվող տոկոսների նկատմամբ: Այդ դեպքում, համաձայնեցված է նաեւ, որ Հայաստանի իրավասու մարմիններն անհապաղ կտեղեկացնեն Միացյալ Թագավորության իրավասու մարմիններին, որ ապահովված են սույն կետի կիրառման պայմանները:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է ք. Լոնդոն 13-ին, 2011թվականի հոկտեմբերի ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը անգլերեն եւ հայերեն լեզուներով, երկու տեքստերը հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ